

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1920–1922 ԹԹ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ–ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՋ*

Մուտք

Հայ պատմագիտական և հուշագրական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) 1920–1922 թթ. միջազգային–իրավական կարգավիճակի, իսկ ավելի լայն ժամանակագրական կտրվածքով՝ ԽՍՀՄ կազմում նրա ինքնուրույնության աստիճանի շուրջ:

Առ այդ՝

1. Հայաստանի և Սփյուռքի հեղինակների մի մեծ խումբ գտնում է, որ Առաջին Հանրապետության անկումով և մեր երկրի խորհրդայնացումով Հայաստանը կորցրեց սեփական անկախությունը ու քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ առումներով դարձավ Խորհրդային Ռուսաստանի բաղկացուցիչ մասը:

2. Պատմաբանների մի հատված (հիմնականում՝ խորհրդային, մասամբ՝ հետխորհրդային), կարծում է, որ ընդունված փաստաթղթերը, օտար երկրներում հաստատված դիվանագիտական ներկայացուցչությունները, պետականության խորհրդանիշերը և այլն հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՍԽՀ-ն 1920–1922 թթ. համարվում էր ինքնիշխան պետություն՝ միաժամանակ խոստովանելով, որ շատ կողմերով դա **ֆորմալ (ձևական) բնույթ** էր կրում: Իսկ ահա Անդրֆեդերացիայի հիմնումից ու հատկապես՝ ԽՍՀՄ կազմավորումից հետո (1922 թ.) **բովանդակային առումով** ևս Հայաստանը դադարեց անկախ լինել, թեև պահպանեց իր պետականությունը:

3. Գոյություն ունի նաև խորհրդային կարոտաբաղձությամբ ապրող հեղինակների մի խումբ, որը պնդում է, թե իբր՝ խորհրդայնացումով

*Հոդվածն ընդունվել է տպագրության 6.09.2012:

Հայաստանը ձերք բերեց իրական անկախություն և 70 տարիներ ապրեց որպես անկախ, ազատ ու զարգացած հանրապետություն:

Մեր կարծիքով՝ վերջին տեսակետը լուրջ քննադատության չի դիմում, որովհետև մի բան է՝ անկախ պետականություն ունենալը, ինչն ամենևին էլ չի ենթադրում անպայման բարեկեցիկ կյանք և բոլորովին այլ՝ բարեկեցիկ կյանքով ապրելը: Կարելի է ապրել որևէ հզոր տերության հովանու ներքո և չունենալով սեփական ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու հնարավորություն՝ ձեռք բերել նյութապես ապահով կյանք:

Հանրահայտ ճշմարտություն է, որ անկախությունն ու ազատությունը յուրաքանչյուր ժողովրդի և ազգի համար գերակա արժեքներ են՝ միջազգային ասպարեզում նրա ճանաչման ու գնահատման չափանիշներ, որոնք համադրելի չեն կենսաբանական պարզ պահանջումներին բավարարություն տալու հետ, քանզի անկախությունը բնական և անօտարելի կատեգորիա է: Ուստի անկախ չի կարող լինել այն ազգը, որը հոգով անկախ չէ՝, որովհետև անկախ լինել, նշանակում է ձեռք բերել «վճռական մենակի հոգեբանություն»²:

Խորհրդային Հայաստանը ազատ և անկախ համարող հեղինակներին ի պատասխան կարելի է հարց տալ. եթե մեր երկիրը անցած 70 տարիներին իսկապես եղել է անկախ պետություն, ապա էլ ի՞նչ կարիք կար 1991 թ. սեպտեմբերին անկախության հանրաքվե անցկացնել և հռչակել Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Ակներև է, որ վերոհիշյալ տեսակետը պաշտպանողները չունեն քիչ թե շատ ծանրակշիռ, գիտականորեն հիմնավորված, իրավականորեն փաստարկված հիմքեր, այլ պարզապես հիշեցնելով խորհրդային շրջանի սոցիալապես քիչ թե շատ բարվոք կյանքը, նպատակ են հետապնդում կրկին վերադառնալ Ռուսաստանի հովանու ներքո՝ նախկին ԽՍՀՄ-ի կամ էլ ներկայումս ասպարեզ նետվող **Եվրասիական միության** տեսքով:

1. Պետություն և պետականություն

Խորհրդային Հայաստանի միջազգային-իրավական կարգավիճակի պատմագիտական լուսաբանման համար նախ՝ հարկ է պարզել թե իրավական և ժառանգորդական ինչպիսի կապ կա Հայաստանի երեք հանրապետությունների միջև:

Խորհրդային պատմաբանները և իրավագետները գրեթե առանց բացառության իրենց աշխատություններում մեծադրորդ ու բարձրագույն կերպով հայտարարել են, որ «դաշնակների լուծը» թոթափելուց հետո Խորհրդային Հայաստանն ու հայ ժողովուրդը իբր՝ ձեռք բերեցին իսկական ազատություն ու անկախություն: Նման թեզ առաջ քաշելով՝ նրանք հիմք են ընդունել Խորհրդային Ռուսաստանի կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ին ընդունած «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլա-

1 Ավելի հանգամանորեն տես **Հակոբյան Ա.**, Ստորումներ անկախության մասին, «Երկիր», Եր., 31 մայիս – 6 հունիս 2002 թ., էջ 12: Տես նաև նույնի՝ Մայիսի 28-ի խորհուրդը, «Երկիր», Եր., 26 մայիսի 2006 թ., էջ 3:

2 **Նժդեհ Գ.**, Երկեր, Եր., 2002, էջ 66:

րացիայում» տեղ գտած ազգերի իրավահավասարության և ազատ ինքնորոշման մասին դրույթները, ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, ազգային հարցին նվիրված Վ. Լենինի աշխատությունները և այլն³: Ավելին՝ տարիներ շարունակ նրանք պնդել են, թե դրանով կարելի է ասել լուծվեց ոչ ավել, ոչ պակաս՝ Հայկական հարցը: Այստեղ տեղին է հիշել 1920 թ. դեկտեմբերի 4-ին «Պրավդայում» տպված Ի. Ստալինի հայտնի հոդվածը «այսպես կոչված հայկական հարցը» խորհրդային իշխանության կողմից լուծելու մասին, ինչը կարելի է որակել որպես հեգնանք հայ ժողովրդի հասցեին⁴:

Ուստի խնդիրը պարզաբանելու համար նախ՝ փորձենք միմյանց հետ համեմատել «պետականություն» և «պետություն» հասկացությունները: Ըստ լեզվաբան Էդ. Աղայանի բացատրական բառարանի՝ «պետականությունը» ենթադրում է պետական կառուցվածք՝ կարգ, պետության կազմակերպական սխտեմ: Նույն բառարանով, սակայն, «պետություն» հասկացության բնորոշման համար բերված է մարքայան դասակարգային բացատրությունը. այն իբր՝ մի դասակարգի բռնության գործիքն է մյուսներին ճնշելու համար: Էդ. Աղայանի տված մեկ այլ բացատրությամբ՝ «պետությունը պետական կառավարման մարմինների ամբողջություն է»⁵:

Դժվար չէ նկատել, որ հիշյալ բառերի բացատրությունը և՛ լեզվաբանական, և՛ քաղաքագիտական առումով հնացած է ու միակողմանի և չի համապատասխանում «պետություն» և «պետականություն» հասկացությունների իմաստային էությանն ու բովանդակությանը: Այնուամենայնիվ, ընդհանրացնելով վերը բերվածը, կարելի է եզրակացնել, որ **«պետականությունը» պետության կայուն ինստիտուցիոնալ համակարգն է, իսկ «պետությունը»՝ ըստ պատմափուլերի փոփոխվող քաղաքական կառավարման վարչակարգը (ռեժիմը):**

Օբսֆորդի համալսարանի կազմած քաղաքագիտական բառարանում խոսվում է միայն «պետություն» եզրի մասին: Այնտեղ տրված է պետության հետևյալ սահմանումը. «Քաղաքական այնպիսի կառույցների որոշակի համակարգ, որոնց նպատակը որոշակի սահմաններով տարածքի ներսում իշխանության կազմակերպումն է՝ հանուն ընդհանուր շահերի»⁶: Սա, իհարկե, արևմտյան ժողովրդավարության արժեհամակարգին բնորոշ սահմանում է, որտեղ պետական իշխանությունը դիտվում է որպես ընդհանուր շահերի և ոչ թե այս կամ այն դասակարգի նպատակների իրացման միջոց:

«Պետականություն» և «պետություն» հասկացությունների փոխհարաբերակցության խնդրում հետևյալ պարզաբանումն է տվել խորհրդահայ

3 Стів Декреты советской власти, т. 1, М., 1957, с. 39-41, 298-299, 322; Образование СССР (сборник документов, М., 1972, с. 21-22, 31-34; Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1960, էջ 11, 156-157; Լենին Վ., Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ.35, Եր., 1981, էջ XI, 260-261 և ուրիշներ:

4 Стів Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 320:

5 Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2, (Դ-Ֆ), Եր., 1976, էջ 1212-1213:

6 Քաղաքագիտության և քաղաքականության Օբսֆորդի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 505:

ճանաչված իրավաբան-պետականագետ Ա. Եսայանը: Ըստ նրա՝ «պետականություն» և «պետություն» հասկացությունները իրարից տարբերվում են հետևյալով. «պետականությունը» կայուն է, մշտահաստատ, իսկ «պետությունն» իբրև բռնության, ճնշման գործիք փոփոխվում է ըստ սոցիալ-քաղաքական իշխանության ձևի: Օրինակ՝ սոցիալիստական հեղափոխության ժամանակ փոխվում է պետության սոցիալ-դասակարգային բնույթը, իսկ պետականությունը՝ որպես հասարակական-քաղաքական կայուն կազմակերպություն, պահպանվում է⁷:

Թեև հասկանալի է, որ վերջին հեղինակը «պետականություն» և «պետություն» հասկացությունները լուսաբանելիս նույնպես առաջնորդվել է մարքս-լենինյան մեթոդաբանությամբ, բայց երբ այս տեսադրույթը կոնկրետացնում ենք 1920 թ. Հայաստանի վրա, ապա ստացվում է, որ **Հայաստանի առաջին Հանրապետության անկման և երկրի խորհրդայնացման փուլում մեզանում առկա էին և՛ «պետականություն», և՛ «պետություն» համակարգերը:**

Առաջին հանրապետության անկումից ու խաղաղ իշխանափոխությունից հետո էլ նույնությամբ պահպանվեց ու փոխանցվեց «պետականությունը»՝ որպես հասարակական-քաղաքական կայուն համակարգ, սակայն փոխվեց «պետության» սոցիալ-քաղաքական ու դասակարգային էությունը (բնույթը): Նրանում հանձին Հայիեղկոմի՝ խորհրդարանական, ժողովրդավարական կառավարմանը փոխարինելու եկավ դասակարգային իշխանության նոր ձևն իբրև պրոլետարիատի դիկտատուրա:

Ի մի բերելով վերը ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ հանձին Հայաստանի առաջին Հանրապետության՝ 1918 թ. մայիսի 28-ին, դարավոր ընդմիջումից հետո, սկիզբ է դրվել և՛ հայոց **պետականությանը**, և՛ **պետությանը**՝ իր քաղաքական համակարգով և իշխանության կառավարման ձևով: Այն, մեր կարծիքով, օժտված էր լիիշխանությամբ ու անկախությամբ, թեև պետք է նաև ընդունել, որ բացարձակ անկախություն չի լինում: Ուստի երբ արտաքին ուժերի բռնի միջամտությամբ անկում ապրեց Հայաստանի առաջին Հանրապետությունը և երկիրը խորհրդայնացվեց, արդյունքում՝ Հայաստանում պահպանվեց ու փոխանցվեց **պետականությունը**: Սակայն կատարվեց պետական իշխանության, վարչակազմի ու վարչակարգի փոփոխություն. խորհրդարանական, ժողովրդավարական կառավարման ձևին փոխարինելու եկավ այսպես կոչված՝ **պրոլետարիատի դիկտատուրան:**

2. Խորհրդային Հայաստանի ինքնիշխանության խորհրդային գնահատականները

Սովորաբար սուվերեն (ինքնիշխան) պետություն ասելով՝ պետք է հասկանալ նրա ինքնուրույնությունը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում: Ուստի մնում է պարզաբանել, թե պրոլետա-

7 Տե՛ս **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920–1922 թթ., Եր., 1967, էջ 228:

րիատի դիկտատուրայի իշխանության ձևով հանդես եկած նոր պետությունը՝ ՀՍԽՀ-ն, ինչպիսիք լիիշխանությամբ կամ անկախությամբ էր օժտված, քանզի «պետականության» ու «պետության» համակարգերի առկայությունը դեռևս չի ենթադրում տվյալ պետական միավորի **անկախություն**:

Խորհրդային Հայաստանի պետական շինարարության հարցերում խորհրդահայ պատմագրության մեջ և անգամ առանձին հասարակաշերտերում ժամանակին տիրապետող կադապարներից էր պատմաբան Հ. Էլչիբեկյանի աշխատությունում տեղ գտած այն կեղծ տեսադրույթը, թե իբր՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը փրկեց հայ ժողովրդին սպառնացող կործանումից: Խորհրդային իշխանության հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը ստեղծեց իր պետականությունը, ձեռք բերեց իսկական ազատություն և անկախություն»⁸: Նման դրույթը չի դիմանում քննադատության, որովհետև **Նախ**՝ «Մեծ Հոկտեմբերը» ոչ թե հայ ժողովրդին փրկեց կործանումից, այլ իրականում քաղաքական մեծ կորուստներ ու վնասներ պատճառեց: **Երկրորդ**՝ ինչ վերաբերում է այն դատողությանը, թե խորհրդային իշխանության հաղթանակով հայ ժողովուրդը ստեղծեց իր պետականությունը, ապա ասվածը չի համապատասխանում իրականությանը, քանզի ստացվում է, որ մինչ այդ Հայաստանը չի ունեցել իր Առաջին Հանրապետությունը:

Խորհրդային մեկ այլ հեղինակ՝ Ա. Բեգիյանը, մեղանչելով պատմական ճշմարտության առջև, հայտարարում էր, որ Հայաստանի խորհրդայնացումով և 1922 թ. փետրվարի 4-ի Սահմանադրության ընդունումով ՀՍԽՀ-ը ձեռք բերեց անկախություն, դարձավ սուվերեն (ինքնիշխան) պետություն: Սույն հեղինակի ասածին կարելի է հակադարձել այն փաստով, որ Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրության (Հիմնական օրենքի) մեջ որևէ ակնարկ անգամ չկա ինքնիշխանության (սուվերենության), էլ չենք խոսում անկախության մասին⁹: Դրան հակառակ՝ Ա. Բեգիյանը ձևական էր համարում «դաշնակների հանրապետությունը» և գտնում էր, որ խորհրդայնացումից հետո տեղի ունեցավ Հայաստանի պետականության զարգացում¹⁰:

Պետք է ասել, որ ընդհակառակը՝ տեղի է ունեցել Խորհրդային Հայաստանի ինքնիշխանության կորուստ: ՀՍԽՀ սահմանադրության ընդունումից հետո երկրի ինքնիշխանության կորստի **առաջին փուլը** 1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնային միության (Անդրֆեդերացիայի), ապա նույն թվականի դեկտեմբերի 13-ին Վրաստանի և Ադրբեջանի ՍԽՀ-ների հետ մեկ դաշնային հանրապետության (ԱՍՖԽՀ) ստեղծումն էր, իսկ **երկրորդ փուլը՝** 1922 թ. դեկտեմբերի 30-ին ԽՍՀՄ կազմում հայտնվելը, փաստորեն՝ կրկնակի ենթակայությամբ: Դժվար չէ նկատել, որ տեղի է ունեցել նաև խորհրդային մյուս հանրապետությունների թեկուզ ձևական ինքնիշխանության իրավական ու փաստական կտրուկ սահմանափակում, որն իր

8 Эльчибекия А. М. От ревкомов к советам. Е., 1978, с. 11.

9 Տե՛ս ՀՍԽՀ Սահմանադրությունը (Հիմնական օրենք), Եր., 1922, էջ 1-16: (Հարկ է նաև փաստել, որ սույն սահմանադրությունն իրականում ընդունվել է ոչ թե փետրվարի 4-ին, այլ փետրվարի 2-ին):

10 Տե՛ս **Бегиян А.З.** Развитие советской государственности в Армении. Е., 1968, с. 27, 197.

մարմնավորումն է գտել 1924 թ. հունվարի 31-ին ընդունված ԽՍՀՄ առաջին սահմանադրության մեջ:

Խորհրդային սահմանադրագետները միութենական հանրապետությունների ինքնիշխան իրավունքների սահմանափակումը մեկնաբանում ու հիմնավորում էին նրանով, որ համաձայն ԽՍՀՄ սահմանադրության, իբր՝ «միութենական հանրապետությունները իրենք են կամավոր իրենց իրավունքների մի մասը տվել ԽՍՀՄ-ին՝ իրենց իսկ շահերից ելնելով»¹¹: Այսինքն՝ ստացվում էր, որ ՀՍԽՀ-ն է իր անկախությունը կամավոր հանձնել ընդհանուր միությանը: Խիստ կասկածելի է, թե որևէ ինքնիշխան պետություն իր անկախությունը կամավոր կհանձնի մեկ այլ պետության:

Իսկ մինչ ԽՍՀՄ ենթակայության տակ անցնելը ՀՍԽՀ-ը ձևական առումով համարվում էր ինքնիշխան, անկախ պետություն: Օրինակ՝ 1921 թ. ապրիլի 19-ին Երևանի կուսկազմակերպության կոմիտեի և արհեստակցական միությունների խորհրդի միացյալ հանդիսավոր նիստում տրված զեկուցման մեջ ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն նշել է, որ միայն «Սովետական իշխանությունը ապահովեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի իսկական անկախությունը ինպերիալիզմից»¹²: Այնուհետև իր ելույթի վերջում նա հայտարարել է. «Կեցցե՛ն անկախ Խորհրդային Հայաստանը»¹³: Ստացվում է, որ Խորհրդային Հայաստանի անկախության հարցում ևս խորհրդահայ պատմագրությունը ուղեցույց է ունեցել Գ. Օրջոնիկիձեի տարբեր առիթներով արտահայտած մտքերը:

Խորհրդային Հայաստանի տնտեսական և քաղաքական անկախության հարցի մասին վստահաբար կարելի է ասել, որ, իրոք, նա այլևս անկախ էր «ինպերիալիստական» որակվող Արևմուտքի պետությունների ազդեցությունից ու կախվածությունից, սակայն ամբողջական կախվածության մեջ էր Խորհրդային Ռուսաստանից, այն էլ՝ ինչպիսի՛ կախվածության: Սա է դառն ճշմարտությունը Խորհրդային Հայաստանի «անկախության» մասին: Բայց անժխտելի է նաև, որ Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդին բերեց հարաբերական հանգիստ ու խաղաղություն, բայց ոչ՝ ազգային-պետական ազատություն ու անկախություն:

Անշուշտ, պետք է ընդունել, որ ՀՍԽՀ-ը, ասել է թե՛ Խորհրդային Հայաստանը իր ողջ պատմափուլում ունեցել է պետականությանը բնորոշ բոլոր անկապտելի հատկանիշներն ու ատրիբուտները (սիմվոլները)՝ պետության անվանումը, էթնիկ ընդհանրությունը, դրոշը, օրհներգը, զինանշանը, տարածքը, պետական իշխանության կառույցները և այլն: Սակայն դրանք բավարար պայման չեն անկախ պետություն համարվելու համար:

3. Սփյուռքի հետազոտողների տեսակետները

Միանշանակ չէր սփյուռքահայ հեղինակների վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի իրավական կարգավիճակի հարցին: Սփյուռքի

11 Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիա (կազմող՝ Ա. Եսայան և ուրիշներ), Եր., 1949, էջ 35:

12 «Կոմունիստ», Եր., 23 ապրիլի 1921 թ.:

13 Նույն տեղում:

դաշնակցական պատմագիրներն ու հուշագիրները անվերապահորեն ժխտել են Խորհրդային Հայաստանի անկախությունը: Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական ու պետական բոլոր գործիչները, մտավորականները քաջ գիտակցում էին, որ Հայաստանի խորհրդայնացումը նշանակում է մեծ զոհողություններով ձեռք բերված անկախության կորուստ: Սակայն ժամանակին նրանց կողմից Հայաստանի անկախությունը զոհաբերվեց ավելի մեծ ու անփոխարինելի արժեքի՝ ժողովրդի ֆիզիկական գոյությանն ու անվտանգությանը: Ու թեև 1920 թ. դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագրի 1-ին հոդվածը ամրագրում էր, թե «Հայաստանը հայտարարվում է **անկախ** (ընդգծումը մերն է - Ա.Լ.) սոցիալիստական հանրապետություն»¹⁴, սակայն տվյալ փաստաթղթի ինչպես այդ, այնպես էլ մնացած հոդվածները մնացին սոսկ որպես մեռած տառեր և գործնականում այդպես էլ չլիքառվեցին:

Ուստի Ս. Վրացյանը գտնում էր, որ թեև Հայաստանի խորհրդայնացումից հետո որոշ ժամանակ ձևականորեն պահվեց անկախության սկզբունքը, «բայց փաստորեն անկախությունից ոչինչ չմնաց»¹⁵:

Անշուշտ, Հայաստանն իր խորհրդայնացմամբ կորցրեց անկախությունը, սակայն չափազանցություն ու ժխտողականություն էր Սփյուռքի որոշ հեղինակների այն պնդումը, թե խորհրդայնացումով Հայաստանը կորցրեց պետականությունը և վերածվեց «Ռուսաստանի ծայրագավառի»¹⁶: Արևելյան Հայաստանը, իրոք, ծայրագավառ էր ցարիզմի օրոք, երբ այն տրոհված էր մի քանի նահանգներում, և սկսած 1840 թվականից պաշտոնապես չէր գործածվում անգամ «Հայկական մարզ» քաղաքական հասկացությունը :

Սփյուռքի մեկ այլ հեղինակ՝ պահպանողական հայացքների տեր պատմաբան և բանասեր Ա. Ալպոյաձյանը Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, իր հոդվածաշարերից մեկում գրում էր, որ «Խորհրդային Հայաստանը այժմ բացարձակապես անկախ պետություն մըն է»¹⁷: Բայց Հայաստանի խորհրդայնացումից տարիուկես անց նույն հեղինակն արդեն խնդրահարույց էր համարում Հայաստանի անկախությունը: Այն բանից հետո, երբ ստեղծվել էր Անդրդաշնությունը և նշմարվում էր ԽՍՀՄ կազմավորումը, որի բաղադրիչներից էր նաև Հայաստանը, Ա. Ալպոյաձյանը 1922 թ. սեպտեմբերին գրում էր. «Այսօր Հայաստան՝ մաս կը կազմե Անդրկովկասեան հանրապետութեանց Դաշնակցութեանը, որ, իր կարգին՝ ամբողջութեամբ մաս կը կազմե Համառուսական Դաշնակցութեան: Զուրկ՝ արտաքին սեփական քաղաքականութիւն մը մշակելու և տնտեսական առանձնական գործունէութիւն ունենալու իրավունքներէն, և առանց բանակի՝ պետական անկախություն մը շատ խնդրական է»¹⁸:

14 Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 383-384:

15 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 604:

16 Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը. հայ սպայությունը, Շատախ, Եր., 2002, էջ 338:

17 Ալպոյաձեան Ա., Անկախ Հայաստան 1 սեպտեմբեր 1920 թ. - 1 սեպտեմբեր 1921 թ., մաս Ա., «Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը», ԺԶ, տարի 1922 թ., Կ. Պոլիս, 1922, էջ 295:

18 Ալպոյաձեան Ա., Անկախ Հայաստան 1 սեպտեմբեր 1921 թ. - 1 սեպտեմբեր 1922 թ., մաս Բ, «Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1923, էջ 329:

Իսկ հայտնի ռամկավար գործիչ Հրաչ Երվանդը թեև ընդունում էր Խորհրդային Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից և երկրի ներսում ռամկավարության և ազատականության շղթայված լինելու փաստը, բայց և այնպես ՌԱԿ-ի չափավոր գործելակերպին բնորոշ մոտեցմամբ ցուցաբերում էր հանդուրժողական կեցվածք՝ գտնելով, որ «դեռևս թույլ և անօգնական Հայաստանը կարիք ունի Խորհրդային Ռուսաստանի օգնությանը, հոգածությանը, խնամքին, անդատվությանը»¹⁹: Այստեղից կարելի է հետևություն անել, որ ռամկավարները պատրաստ էին Հայաստանի անկախությունը հարկ եղած չափով զոհաբերել՝ հանուն նրանում ապրող հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական անվտանգության ու բարեկեցության:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

4. Կողմերի հիմնական փաստարկներն ու հակափաստարկները

Կրկին փաստենք, որ քննության առնելով ՀՍԽՀ միջազգային-իրավական կարգավիճակը և այն համեմատելով Առաջին Հանրապետության հետ, խորհրդահայ պատմաբաններն ու իրավաբանները ըստ էության չեն ընդունել, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը ինքնորոշված (ինքնիշխան), անկախ պետություն էր: Ավելին՝ նրանք փորձ են արել պետության իրավասուբյեկտության տեսակետից Խորհրդային Հայաստանը հակադրել Առաջին Հանրապետությանը և որքան էլ տարօրինակ է՝ անկախության ու ինքնիշխանության առումով նախապատվությունը տվել են Խորհրդային Հայաստանին: Խորհրդահայ իրավաբան Ա. Եսայանի բնորոշմամբ. «Սովետական իշխանության հռչակումով (1920 թ. նոյեմբերի 29-ի դեկլարացիայով) Հայաստանը մտավ միջազգային հարաբերությունների ոլորտը որպես միջազգային իրավունքի սոցիալիստական սուբյեկտ, հայ ժողովրդի սուվերեն կամքի արտահայտիչ»²⁰: Մեկ այլ տեղ նա նշում է. «Որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, Սովետական Հայաստանը օժտված էր անկախ պետական գերագույն իշխանության բոլոր ատրիբուտներով...»²¹, և մինչև ԽՍՀՄ կազմավորելը ՀՍԽՀ-ը խորհրդային մյուս անկախ հանրապետությունների պես եղել է «միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ»²²: Բերված քաղվածքներից հետևում է, որ մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը կարծես թե հայկական պետություն չի եղել, և միայն խորհրդայնացումից հետո Հայաստանը դարձավ անկախ, այսինքն՝ միջազգային իրավունքի սուբյեկտ: Դրանով փաստորեն ժխտվում է ՀՀ իրավասուբյեկտության փաստը (իրողությունը), այն դեպքում, որ նա ինչպես de-facto, այնպես էլ de-jure միջազգայնորեն ճանաչված է եղել աշխարհի շուրջ 40 պետությունների կողմից, իսկ 1920 թ. պատրաստվում

Պ (Տ) ԳԱՍԻԻ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒՄՆԵՐԵՐ-ՊԵՆԿՄԵՐԵՐ, 2012

ՎԷՄ համահայկական հանդես

19 Երվանդ Հ., Ռամկավար Ազատական Կուսակցություն (իր այսօրը և վաղը), Պոսթըն, 1927, էջ 25:
20 Եսայան Ա., Հայաստանի միջազգային-իրավական դրությունը 1920-1922 թթ., Եր., 1967, էջ 230:
21 Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 255:
22 Եսայան Ա., նշվ. աշխ., էջ 3:

էր անդամագրվել Ազգերի լիգային²³:

Հակադրվելով այս իրողությանը՝ Ա. Եսայանը հայտարարում է Խորհրդային Հայաստանի անկախության և իրավասուբյեկտության մասին՝ այն դեպքում, որ ՀՍԽՀ-ը, մեր կարծիքով, չի ունեցել ոչ միայն անկախություն, այլև քիչ թե շատ ինքնիշխանություն (սուվերենություն) ոչ արտաքին քաղաքականության մեջ, ոչ սոցիալ-տնտեսական կյանքում, ոչ քաղաքական ու պետական շինարարության ոլորտում: ՀՍԽՀ-ն գործնականում գրեթե ամեն ինչում կախված ու ենթակա էր Մոսկվայից՝ վերջինիս պարտադրանքով, ուստի Հայաստանում կիրառվել է այն նույն քաղաքականությունը, ինչ որ գործադրվում էր Ռուսաստանում: Դրա վառ վկայություններն են Հայիեդկոմի և Ժողկոմխորհի 1920–1922 թթ. ընդունած դեկրետները, որոշումներն ու հրամանները, Հայաստանում կիրառված «ռազմական կոմունիզմի» և ՆԷՊ-ի քաղաքականությունը, Ռուսաստանի օրինակով՝ այլախոհ կուսակցությունների լուծարումները, Կոմկուսի շարքերի գտումները և այլն:

Հասկանալի է, որ ՀՍԽՀ պետական կարգավիճակի հարցում խորհրդահայ իրավաբանների հայեցակետը ոչնչով չի տարբերվել խորհրդահայ պատմաբանների տեսակետից և չէր էլ կարող տարբերվել, որովհետև երկուսն էլ առաջնորդվել են նույն գաղափարախոսությամբ ու մեթոդաբանությամբ:

Նույն կերպ խնդրահարույց էին նաև խորհրդային հեղինակների մեկնաբանությունները և գնահատականները ԽՍՀՄ կազմավորման վերաբերյալ: Խորհրդային քաղաքական գրականության մեջ ԽՍՀՄ կազմավորումը ներկայացված էր որպես միութենական դաշնային և ոչ դաշնային չորս հանրապետությունների **իրավահավասար հիմունքներով** և **կամավոր սկզբունքով** միավորում մեկ դաշնային միության մեջ: Խորհրդային պատմաբանների ու իրավագետների վերոնշյալ պնդումներին պետք է վերապահությամբ մոտենալ հետևյալ պարզ պատճառներով:

Նախ՝ հազիվ թե չորս հանրապետությունների (ՌՍՖՍՀ, Ուկր. ՍԽՀ, Բելոռուսի ՍԽՀ և ԱՍՖՍՀ) միավորումը կարելի է համարել իրավահավասար, երբ ակնհայտ էր ՌՍՖՍՀ գերակա դերը՝ բոլոր չափանիշներով: Թեև ձևի մեջ (ԽՍՀՄ 1924 և հետագա սահմանադրություններում) ԽՍՀՄ-ը ներկայանում էր իբրև հավասարների դաշնություն, սակայն իրականում, այսինքն՝ ոչ թե ձևական, այլ բովանդակային առումով նրա ստեղծման գործընթացում գործադրվել է 1922 թ. ամռանը Ի. Ստալինի գլխավորած ԽՍՀՄ կազմավորման պետական հանձնաժողովի կազմած ինքնավարացման (ավտոնոմիզացիայի) նախագիծը, որն ինչպես հայտնի է, իբրև թե՛ խիստ քննադատության է ենթարկվել Վ. Լենինի կողմից²⁴:

Երկրորդ, ԽՍՀՄ կազմավորման հարցում մյուս լուրջ բացթողումն այն է, որ Միությունը կամավորության սկզբունքով չի ձևավորվել: Դա երևում է հենց թեկուզ կենտրոնական և հանրապետական ղեկավար շրջանակներում արձանագրված սուր տարաձայնություններից ու պայքարից՝

23 Ավելի մանրամասն տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայկական հարցը Ազգերի լիգայում 1920 թ. //«Դրօշակ», Եր., 2001, N 4 (սեպտեմբեր), էջ 77–95:

24 Տե՛ս **Ленин В. И.**, ПСС, т. 45, с. 214.

Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում և այլուր²⁵: Իրականությունն այն է, որ Անդրդաշնությունը և ԽՍՀՄ-ն իբրև ազգային հարցի լուծման ձևեր, կազմավորվել են Կենտրոնի գիտությամբ ու հրահանգով՝ առանց ժողովուրդների կամքն ու կարծիքը հաշվի առնելու: Իհարկե, ձևականորեն՝ ցուցադրական, քարոզչական միջոցառումներ անցկացվել են, բայց իրականում գործել է քողարկված պարտադրանքը: Թեև, անշուշտ, Անդրդաշնության ու ԽՍՀՄ ստեղծումը տվյալ պատմաշրջանում Հայաստանի ու հայության քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ շահերի տեսակետից անհրաժեշտ պետք է համարել իբրև չարյաց փոքրագույն:

Եվ վերջապես՝ կյանքը ցույց տվեց, որ ԽՍՀՄ կազմավորմամբ ոչ թե այդ բազմազգ տերությունում «մեկընդմիջտ և անդամնալիորեն» լուծվեց ազգային հարցը, այլ ընդամենը արտաքին բիրտ ուժի, վախի, նաև՝ կեղծ եղբայրության քարոզչության միջոցով հարցը կոծկվեց ու կոնսերվացվեց և կրկին բարձրացավ արդեն 1980-ական թվականների երկրորդ կեսին՝ գորբաչովյան «վերակառուցման» շրջանում:

5. Երրորդ Հանրապետության շրջանում առաջադրված տեսակետներ

Հետխորհրդային շրջանի ուսումնասիրողները իրենց հիմնական մատվ չեն ընդունում ՀՍԽՀ անկախության մասին խորհրդային հեղինակների (պատմաբանների և իրավաբանների) պնդումները, բայց դրա փոխարեն ընդունում են պետականության առկայությունը Խորհրդային Հայաստանում:

Այսպես՝ պատմաբան Կարեն Խաչատրյանը պաշտպանում է այն տեսակետը, որ Խորհրդային Հայաստանը 1920–1922 թթ. (մինչև Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ-ի կազմավորումը) ուներ **ինքնիշխան կարգավիճակ** (ընդգծումը մերն է – Ա.Հ.)²⁶: Սակայն պետք է ընդունել, որ «անկախություն» և «ինքնիշխանություն» («սուվերենություն») հասկացությունների բովանդակության հարցում գոյություն ունի որոշակի տարբերակում: «Անկախությունը» ինքնիշխանության (սուվերենության) ամենաբարձր աստիճանն է: Իսկ «ինքնիշխանությունը» որոշակի ծավալով ինքնուրույնության առկայությունն է տվյալ պետական միավորի մոտ: Կարելի է առանձնացնել նաև «անկախության» և «ինքնիշխանության» միջև ընկած միջանկյալ մեկ աստիճան ևս՝ «լիիշխանություն»-ը:

Ուստի Կ.Խաչատրյանը, խոսելով Հայաստանի «ինքնիշխանության», բայց ոչ «անկախության» մասին, ընդունում է, որ ինքնիշխանության և

25 Տե՛ս Очерки истории коммунистических организаций Закавказья, ч. 2, (1921–1937 гг.), Баку, 1971, с. 41; **Куличенко М. И.**, Образование и развитие Союза ССР, Е., 1982, с. 112–114, 216–218; История России. XX век, отв. ред. **А. Зубов**, М., 2009, с. 771; **Ղարիբջանյան Գ.Բ.**, Լենինը և Անդրկովկասը, գիրք 3 (1917–1924), Եր., 1975, էջ 377–378: Ապագա միության ձևավորման հարցում հիմնական տարաձայնությունը հանդես է եկել կոնֆեդերատիվ, ֆեդերատիվ, թե ինքնավար սկզբունքով միավորման շուրջ: Հայաստանում ըստ էության նման ազգային թեքում չի դրսևորվել: Եվ դա պետք է բացատրել Հայաստանի աշխարհաքաղաքական վիճակով, նրա սոցիալ-տնտեսական պայմաններով:

26 Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Եր., 2007, էջ 6:

անկախության միջև գոյությունի ունի լիիշխանության չափի ու ծավալի որոշակի տարբերություն, ինչից կարելի է ենթադրել, որ հեղինակը չի կարծում, թե ՀՄԽՀ-ն 1920–1922 թթ. ունեցել է լիարժեք անկախություն:

Կ.Խաչատրյանը մեկ այլ տեղ արձանագրում է նաև, որ, Խորհրդային Հայաստանը ներքին (բայց ոչ արտաքին) քաղաքականության հարցերում «այնուամենայնիվ, զգալի ինքնուրույնություն ուներ»²⁷: Ինչ վերաբերում է պետականության պարագային, ապա հեղինակը միանշանակ կերպով փաստում է, որ ոչ միայն 1920–1922 թթ., այլև ԽՍՀՄ կազմավորումից հետո էլ Հայաստանը պահպանեց «ազգային պետականությունը»²⁸:

Նորահռչակ Խորհրդային Հայաստանի անկախություն չունենալու փաստը անուղղակի կերպով արձանագրում է նաև Արամ Սիմոնյանը: Խոսելով 1921 թ. Փետրվարյան ապստամբության մասին, հեղինակը ապստամբության կոնկրետ խնդիրների շարքին է դասում Հայաստանի անկախության վերականգնումը²⁹: Այսինքն՝ Խորհրդային Հայաստանը չուներ անկախություն, ուրեմն և՛ ապստամբները խնդիր էին դրել վերականգնել այն:

Հետխորհրդային պատմաբան-քաղաքագետ Արմենակ Մանուկյանը տեսակետ է հայտնում, որ եթե մինչ ԽՍՀՄ կազմավորումը Հայաստանը ձևականորեն անկախ էր Մոսկվայից, ապա ԽՍՀՄ կազմավորումից հետո նա խորհրդային մյուս հանրապետությունների նման դառնում է միասնական կենտրոնից ղեկավարվող հանրապետություն³⁰: Կնշանակի, որ Ա. Մանուկյանը ևս ՀՄԽՀ 1920–1922 թթ. անկախության մեջ ձևականություն էր տեսնում:

Մեզանում, սակայն, այսօր էլ կան պատմաբաններ, ովքեր, որոշ վերապահություններով հանդերձ, գտնում են, որ Խորհրդային Հայաստանը 1920–1922 թթ. անկախ պետություն էր: Օրինակ՝ Վ. Ղազախեցյանը ՀՄԽՀ Սահմանադրության ընդունման կապակցությամբ հակված է այն տեսակետին, որ համենայն դեպս՝ 1920–1922 թթ. Խորհրդային Հայաստանը անկախ պետություն էր: Բայց միաժամանակ Վ. Ղազախեցյանը այդ անկախության մեջ տեսնում է նաև ձևական կողմեր³¹: Մեկ այլ տեղ ԽՍՀՄ կազմավորման առիթով հեղինակը Խորհրդային Հայաստանի անկախությունը համարում է կիսատ-պռատ³²:

Մեր կարծիքով, Խորհրդային Հայաստանը չի ունեցել անկախություն՝ իր 70-ամյա պատմության բոլոր շրջափուլերում: Իսկ եթե խոսք կարող է բացվել Խորհրդային Հայաստանի 1920–1922 թթ. կարգավիճակի վերաբերյալ, ապա այդ «անկախությունը» դարձյալ կարելի է որակել իբրև վիրտուալ (երևութական):

Ինչ անկախության մասին կարող էր խոսք լինել, երբ Հայաստանը գրեթե բոլոր չափորոշիչներով ենթարկվում, կառավարվում կամ ուղղորդվում էր Մոսկվայի և նրա տարածաշրջանային օղակ ՌԿ(Բ)Կ ԿԿ Կովբյուրոյի, իսկ 1922-ից՝ ՌԿ(Բ)Կ Անդրերկկոմի կողմից: Հայաստանը գործնականում չէր կարող վարել ինքնուրույն արտաքին ու ներքին քա-

27 Խաչատրյան Կ., նույն տեղում, էջ 164, 234:

28 Խաչատրյան Կ., նույն տեղում, էջ 186, 236:

29 Տե՛ս Սիմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը, Եր., 2000, էջ 414:

30 Տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Եր., 2002, էջ 25–26:

31 Տե՛ս Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920–1940 թթ., Եր., 2006, էջ 232:

32 Տե՛ս Ղազախեցյան Վ.Ն., նշվ. աշխ., էջ 249:

ղաքականություն: Հայաստանի կառավարության ամեն մի քայլ, գործողություն համաձայնեցվում էր Մոսկվայի հետ, իսկ տեղում իրականացվող որոշումներն ընդամենը Կենտրոնի որոշումների պատճենահանված տեսակն էին՝ որոշ խմբագրությամբ հարմարեցված Հայաստանի տեղական պայմաններին:

Ինչ անկախության մասին կարող էր խոսք լինել, երբ Հայաստանի և Ռուսաստանի հանրապետությունների կառավարությունների միջև 1921 թ. մայիսի 11-ին կայացված համաձայնությամբ սահմանվում էր միասնական քաղաքացիություն. այն է՝ Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիությունը «համարվում էր միասնական ու անբաժանելի»³³: Սա նշանակում էր, որ այդուհետ Հայաստանի և Ռուսաստանի բնակիչները համարվում էին նույն երկրի քաղաքացիներ: Ի դեպ, այս կապակցությամբ հարկ է կատարել մտահոգիչ մի դիտարկում. **ներկայումս շրջանավոր այսպես կոչված՝ Եվրասիական միության ստեղծման կապակցությամբ ևս խոսվում է Ռուսաստանի, Հայաստանի և այլ երկրների միասնական քաղաքացիություն սահմանելու հեռանկարի մասին:**

Ժամանակին արձանագրված այս նույն երևույթը արդիական հնչեղություն ունեցող իր վերոհիշյալ մենագրության մեջ ավելի մանրակրկիտ ձևով է ներկայացրել Վ. Ղազախեցյանը: Նա մեկառմեկ ցույց է տվել, թե ինչպես 1921 թ. ընթացքում տեղի էր ունենում Հայաստանի առևտրի, ֆինանսաբանկային համակարգի, տրանսպորտի, զինված ուժերի, կառավարական, կուսակցական և այլ մարմինների ու համակարգերի միավորումը Ռուսաստանի հետ³⁴: Այսինքն՝ սույն պատմաբանի բերած բազում փաստերը հաստատում են հենց հակառակ տեսակետը. ՀՄԽՀ-ն 1920-1922 թթ., իրոք, չի ունեցել անկախություն:

Եվ վերջապես՝ ավելի ուշ հրապարակված իր հոդվածում Վ. Ղազախեցյանը, վերանայելով ՀՄԽՀ պետաիրավական կարգավիճակին իր տված նախորդ գնահատականը, եզրահանգում էր, որ «Հայաստանի, այսպես կոչված, անկախությունը (խոսքը 1920-1922 թթ. մասին է - Ա.Հ.) խիստ ձևական էր...նա կախյալ վիճակում էր գտնվում Ռուսաստանից»³⁵:

Հայտնի է նաև, որ բոլշևիկյան կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը ենթադրում էին վերևից ներքև խիստ կենտրոնացված գաղափարախոսական և կազմակերպականոնադրական համակարգ: Ազգային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմը օգտվում էր սոսկ կուսակցության **մարզային կոմիտեի** իրավունքներից և ամբողջովին ենթակա էր ՌԿ(բ)Կ կենտկոմին: Այսպես՝ ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարում (1925 թ. դեկտեմբեր) ընդունված կանոնադրության մեջ (կետ 32) ամրագրված էր. «ՍՍՀՄ և ՌՍՖՍՀ ազգային հանրապետությունների (և մարզերի) տերիտորիաներն սպասարկող կուսակցական կազմակերպությունները հավասարեցվում են կուսակցության մարզային (կամ նահանգային) կազմակերպություններին, այսինքն՝ ամբողջապես ենթարկվում են ՀամԿ(բ)Կ կենտկոմին»³⁶: Այլ խոսքով, ԽՍՀՄ յուրաքանչյուր

33 Ղազախեցյան Վ.Ն., նշվ. աշխ., էջ 236:

34 Տե՛ս Ղազախեցյան Վ.Ն., նշվ. աշխ., էջ 233-236:

35 Ղազախեցյան Վ.Ն., Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում // ԲՀԱ, Եր., 2011, թիվ 1, էջ 47:

36 ՍՄԿԿ-ն... բանաձևերում և որոշումներում, հ. 3, (1922-1925), Եր., 1987, էջ 633:

հանրապետության կոմունիստական կուսակցությունն ուներ ընդամենը մարզային կազմակերպության իրավասություն: Ինքնին հասկանալի է, որ մարզային կազմակերպության կարգավիճակ ունեցող Հայկոմկուսը, որը հանրապետության միակ ղեկավար քաղաքական ուժն էր, չէր կարող ՌԿ(Բ)Կ Կենտկոմի ենթակայությունից դուրս, ինքնուրույն, անկախ քաղաքականություն իրականացնել: Նույնն էր վիճակը նաև մյուս հանրապետությունների պարագայում, ուրեմն՝ կուսակցական-քաղաքական ղեկավարման առումով ևս ՀՄԽՀ-ն անկախ չէր: Քանզի հասկանալի է, որ Հայաստանը անկախ էր այնքանով, որքանով անկախ էր նրա գլուխ կանգնած քաղաքական ուժը՝ Հայկոմկուսը:

ՀՄԽՀ-ի՝ ՌՍՖՍՀ-ից իրավաօրենսդրական կախվածության մասին էր վկայում նաև այն իրողությունը, որ Հայիեդկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով «Խորհրդային Հայաստանի տարածքում վերացվում էին ՀՀ-ում գործող բոլոր օրենքները և դրա փոխարեն օրենքի ուժ էին ստանում ՌՍՖՍՀ օրենքներն ու դեկրետները՝ համապատասխան փոփոխություններով»³⁷:

Այն իրողությունը, որ հանրապետության կյանքին վերաբերող բոլոր կարևոր հարցերը լուծում էր Միսկվան, երևում է հետևյալ ակնառու փաստից: Մինչև Ալ. Մյասնիկյանի՝ 1921 թ. մայիսի սկզբին (4-ին) Երևան ժամանելը, ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի կազմը յուրոն դեռևս 1921 թ. մարտի վերջին որոշում էր կայացրել նրան նշանակել Հայիեդկոմի (այսինքն՝ կառավարության) նախագահ³⁸: Առանց Ա. Մյասնիկյանի անձին ու հեղինակությանը դիպչելու, փաստենք, որ Կենտրոնը (Միսկվան) Հայաստանի կառավարության նախագահ էր նշանակում՝ անգամ ձևականորեն հարցը չքննարկելով Հայաստանում:

Հայտնի է նաև, որ Փետրվարյան ապստամբության հետ կապված՝ Հայիեդկոմի ներման մասին ղեկընտը հրապարակվել է 1921 թ. ապրիլի 10-ին, համաներմանը ընդունվել է ապրիլի 23-ին, հրապարակվել՝ 24-ին, ինչն արտոնում էր անհապաղ բանտերից ազատել բոլոր քաղբանտարկյալներին: Համաներումը տարածվում էր նաև ապստամբության ղեկավարների վրա: Պարզվում է, սակայն, որ մայիսի 12-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվել է նոր դեկրետ, որով փաստորեն վերադարձ է կատարվել ապրիլի 10-ի մասնակի ներմանը՝ հիմքում ունենալով ՀՄԽՀ Չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանի դժգոհությունը ապրիլի 23-ի համաներման վերաբերյալ: Ստացվում է, որ Հայաստան ղեկավար աշխատանքի գործուղված և 1921 թ. մայիսի 4-ին այնտեղ ժամանած Ալ. Մյասնիկյանը իրավաբանորեն դեռևս համապատասխան պաշտոն չէր ստանձնել (վարչապետ է հաստատվել մայիսի 19-ին), սակայն ստորագրել էր մայիսի 12-ի վերոնշյալ ղեկրետի տակ՝ այն ղեկքում, երբ օրենսդիր գործառույթն իրականացնողը Հայիեդկոմի նախագահ Ս. Կասյանն էր:

Հայաստանի կառավարության ինչ ինքնուրույնության մասին կարող

37 ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 21: Տե՛ս նաև՝ Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов), Е., 1957, с. 480-481.

38 Տե՛ս Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), Եր., 1987, էջ 54: Խորհրդային Հայաստանի 70-ամյա պատմությունը ցույց է տալիս, որ հնարավոր չէր ՀՄԽՀ-ում կուսակցական կամ պետական բարձր ղեկավար պաշտոնի նշանակում առանց Կենտկոմի (Միսկվայի) գիտության ու համաձայնության:

էր խոսք լինել, երբ 1921 թ. հունվարի կեսին Երևան ժամանած Ռուսաստանի Չեկայի լիազոր Գ. Աթաբեկյանը, անտեսելով Ս. Կասյանի ղեկավարած կառավարությանը, ձեռնարկում էր ինքնագլուխ քայլեր՝ չհամաձայնեցնելով դրանք Հայիեղկոմի հետ: ... Հայտնի է նաև, որ Հայաստանի նախկին բանակի սպայակազմի 1921 թ. հունվարյան արտոյի վերաբերյալ հրահանգը տրվել էր Մոսկվայից՝ 1920 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին, անձամբ ՌՍՖՍՀ ռազմական գործերի ժողովում Լև Տրոցկու կողմից³⁹:

Եվ վերջապես՝ ինչ անկախության մասին կարող էր խոսք լինել, երբ միջազգայնորեն չճանաչված երկու երկրներ՝ Խորհրդային Ռուսաստանը և քենալակյան Թուրքիան, 1921 թ. փետրվար-մարտին Մոսկվայում բանակցություններ էին վարում և պայմանագիր կնքում իրար միջև, որոշելով երրորդ կողմի՝ Հայաստանի համար այնքան կենսական տարածքային-սահմանային հարցերը՝ առանց վերջինիս պատվիրակության գիտության ու մասնակցության: Զավեշտն այն է, որ Մոսկվայում գտնվող «անկախ» Խորհրդային Հայաստանի պատվիրակությանն անգամ չի թույլատրվել ներկա լինել պայմանագրի ստորագրման արարողությանը: Ավելին, պարզվում է, որ Հայաստանի պատվիրակությունը նույնիսկ տեղյակ չի եղել, թե երբ է ստորագրվել պայմանագիրը⁴⁰: Այսբանից հետո, կարծում ենք, հազիվ թե որևէ մեկը կարող է խոսք բացել 1920-1922 թթ. Խորհրդային Հայաստանի անկախ կամ ինքնիշխան լինելու վերաբերյալ:

Այսպիսով, մենք բնավ չենք կիսում խորհրդային և մասամբ՝ հետխորհրդային այն բոլոր հեղինակների տեսակետը, թե ՀՄԽՀ-ը 1920-1922 թթ. անկախ պետություն էր: Առավել ևս խոսք չի կարող լինել հետագա ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի քիչ թե շատ անկախ լինելու մասին: Ավաճը հիմնավորելու համար բերենք ընդամենը մեկ փաստ: Այսպես՝ երբ 1944-1947 թթ. ԽՍՀՄ կառավարության նախաձեռնությամբ բարձրագույն հայկական հողերի (Կարսի, Արդահանի) վերադարձման խնդիրը, սակայն արտաքին ուժերի (ԱՄՆ-ի, Անգլիայի) սաստմամբ հետագայում ԽՍՀՄ ղեկավարությունը հետ կանգնեց այդ մտադրությունից, նույն այդ կառավարությունը 1953 թ. մայիսի 30-ին «անկախ» Հայաստանի անունից պաշտոնապես հայտարարեց, որ «Հայաստանի (նաև Վրաստանի - Ա.Ը.) կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից»⁴¹: Այսինքն՝ ԽՍՀՄ կառավարությունը Հայկ. ՄԽՀ անունից պատասխանում էր Թուրքիայի կառավարությանը, որ Հայաստանը տարածքային պահանջ չունի, իսկ հայտարարության վերջում ընդհանրացնում, որ «Խորհրդային Միությունը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»⁴²: Ահա թե ինչ արժեք է ունեցել Խորհրդային Հայաստանի «անկախությունը»:

Այսպիսով՝ զուգահեռներ անցկացնելով Հայաստանի առաջին Հանրապետության և ՀՄԽՀ անկախության հարցի շուրջ հայ պատմագրության մեջ գոյություն ունեցող տեսակետների միջև՝ կարելի է արձանագրել

39 Տե՛ս Геноцид армян (документы и комментарии), сост. проф. Ю. Г. Барсегов, М., 2002, ч. 1, с. 337.

40 Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 211-212:

41 **Վիրաբյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով (1945-1957), Եր., 2001, էջ 62:

42 **Վիրաբյան Ա.**, Նույն տեղում:

հետևյալ իրողությունները:

Սփյուռքի և հետխորհրդային հեղինակները աներկբա կերպով ընդունել և ընդունում են ՀՀ պետականությունը, պետությունն ու անկախությունը: Դրան հակառակ՝ խորհրդահայ պատմաբանները, նաև՝ իրավաբանները, գաղափարական-քաղաքական նպատակահարմարության (կոնյուկտուրայի) թելադրանքով փաստորեն չեն ճանաչել Առաջին Հանրապետության ոչ միայն անկախությունը, այլև պետականության գոյության փաստը՝ «դաշնակցականների Հայաստանը» ներկայացնելով որպես ինպերիալիզմի գործակալ:

Հարց է ծագում. կարելի է արդյոք ՀՀ կախվածությունը Անտանտից ու ԱՄՆ-ից նմանեցնել ու նույնացնել ՀՍԽՀ-ի Խորհրդային Ռուսաստանից կախվածության հետ: Սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական առումներով, որքան էլ որ Առաջին Հանրապետության դրությունը անսկարագրելի ծանր էր ու բարդ, որքան էլ նրա կառավարությունը ջանում էր Անտանտի ու ԱՄՆ-ի օգնությամբ լուծել Հայկական հարցը և ստանալ հովանավորություն ու նյութական օժանդակություն, բայց և այնպես, այդ **կախվածությունը** անհամեմատելի էր ՀՍԽՀ-ի՝ ՌՍՖՍՀ-ից ունեցած **ենթակայության** հետ: Վերջինիս դեպքում դա դրսևորվել է համապարփակ կերպով՝ արտաքին ու ներքին քաղաքական, գաղափարախոսական, իրավաօրենսդրական, տնտեսական, ֆինանսական, կադրային, ռազմական, կրթամշակութային և բազում այլ առումներով:

Այդուհանդերձ, եթե ՀՍԽՀ-ը 1920–1922 թթ. ընթացքում ուներ որոշ ֆորմալ (ձևական) ինքնիշխանություն, ապա շուտով Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումով գործնականում նաև դա կորցրեց՝ պահպանելով պետականությունը, որը կրել է շարունակական բնույթ՝ հասնելով մինչև մեր օրերը:

Խորհրդահայ պատմաբանների և իրավաբանների կողմից թմբկահարվող Խորհրդային Հայաստանի անկախությունը պատրանքային էր ու դեկորատիվ՝ նպատակ ունենալով արտաքին ու ներքին քարոզչական ճակատներում ցույց տալ, թե իբր՝ կենսագործվել է ազգերի ինքնորոշման լենինյան ծրագիրը և իբրև թե՛ ԽՍՀՄ եղբայրական միության մեջ մեկընդմիջտ լուծված է ազգային հարցը: Իսկ թե ինչպես էր լուծվել այդ հարցը, մեր ժամանակներում արդեն ամենքին է հայտնի:

Եզրակացություններ

Այսպիսով, հայ պատմագրության մեջ գոյություն ունեն տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներ 1920–1922 թթ. Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության միջազգային-իրավական կարգավիճակի հարցում: Կրկին հիշեցնենք, որ հեղինակների մի մեծ խումբ գտնում է, որ խորհրդայնացումով Հայաստանը կորցրեց իր անկախությունը և դարձավ Խորհրդային Ռուսաստանի բաղադրիչ մասը: Մյուս խումբը կարծում է, որ մի շարք չափորոշիչներով մինչև Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը, այնուամենայնիվ, ՀՍԽՀ-ն անկախ պետություն էր: Եվ վերջապես, կան խորհրդային կարոտաբաղձությամբ ապրող

հեղինակներ, ովքեր կարծում են, թե իբր Հայաստանն իր իրական անկախությունը և ազատությունը ձեռք բերեց միայն 1920 թ. նոյեմբերին՝ խորհրդայնացման շնորհիվ:

Պատմագիտության ժամանակակից պահանջների ոգով քննելով այս երեք մոտեցումները, կարելի է եզրակացնել, որ Խորհրդային Հայաստանը **գործնականում ի սկզբանե անկախ չի եղել**, սակայն պահպանել է **պետականությունը**:

Միաժամանակ՝ պատմահամեմատական զուգահեռներ անցկացնելով 20-րդ դարի մեր երեք պետությունների միջև՝ կարելի է եզրակացնել, որ նրանք հաջորդաբար «բարձրացել են» միմյանց հիմքի վրա, այսինքն՝ իրավահաջորդության ու ժառանգորդականության ներքին կապ կա այս երեք պետականությունների միջև: Սակայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի, ազատականության ու ժողովրդավարության արժեհամակարգերի առկայության տեսանկյունից իրար առավել մոտ ու հոգեհարազատ են Առաջին և մերօրյա՝ Երրորդ հանրապետությունները, որովհետև նրանք օժտված էին և են ինքնիշխանությամբ ու անկախությամբ:

Պատահական չէ, որ Սփյուռքի ճանաչված մտավորական Վահե Արծրունին խորաթափանց կանխատեսմամբ եզրակացնում էր՝ «Հայկական անկախությունն առայժմ գնաց...»⁴³: Այսինքն՝ գնաց, որպեսզի 70 տարի անց կրկին վերադառնար՝ **Երրորդ Հանրապետության** տեսքով, արդեն նոր պայմաններում, նոր մարտահրավերներով, նոր խնդիրներով ու հեռանկարներով:

Summary

REGARDING SOVIET ARMENIA'S INTERNATIONAL-JURIDICAL STATUS IN 1920-1922

Ararat M. Hakobyan

There are different, sometimes even mutually exclusive opinions concerning the question of the international-juridical situation of Armenian Soviet Socialist Republic (ASSR) in 1920–1922. A large group of scientists finds that before the formation of Trans-Caucasian Federation and SSSR, ASSR was nevertheless an independent state due to a number of standards. And finally, there are some authors with soviet nostalgia, who think that Armenia achieved its “real” independence only in November, 1920 with the sovietization of Armenia.

The author brings numerous facts, and examining these three approaches by the modern standards of historiography substantiates and defends the thesis that the Soviet Armenia wasn't in fact independent initially, but kept its statehood. At the same time, drawing parallels between the three Armenian states of the XX century, the author shows the fact of their succession.

43 Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը. հայ սպայությունը. Շատախ, Եր., 2002, էջ 339: